600.0006.16.01.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվարի 2019 թվականի №6Ա

քաղ. Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ «1xx» ԿՈԴԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հուլիսի 2-ի N176/18-И11 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) են ներկայացվել ընկերության ցանցում ըստ նպատակային նշանակության գործարկված հատուկ ծառայությունների «1xx» կոդերը՝ «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված համարների զբաղեցման թույլտվության մեջ ներառելու խնդրանքով,

բ) Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 13-ի №210Ն որոշմամբ հաստատված՝ հատուկ ծառայությունների կամ ծառայության «1xx» կոդերի զբաղեցման կանոնների 2-րդ կետի համաձայն՝ «1xx» հատուկ ծառայությունների կոդը կարող է օգտագործվել բացառապես արտակարգ իրավիճակներում կամ մարդու կյանքի, առողջության, գույքի կամ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներից պաշտպանություն ապահովող իրավասու մարմինների կողմից՝ նշված իրավիճակներում օպերատիվ արձագանքման գործառույթներ իրականացնելու համար, ինչպես նաև պետական կամ հանրային նշանակության կառույցների կողմից՝ հանրությանը մատուցվող տեղեկատվական բնույթի ծառայությունների տրամադրման համար,

գ) մինչև Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 13-ի №210Ն որոշման ընդունման պահը գործարկված հատուկ ծառայությունների «1xx» կոդերի կարգավորման նկատառումներից ելնելով, Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 25-ի ՈԱԲ-2931Հ, ՈԱԲ-2932Հ, ՈԱԲ-2933Հ գրություններով համապատասխանաբար «ՄՏՍ Հայաստան», «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական և «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել իրենց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում գործարկված և

օգտագործվող «1xx» կոդերի ցանկը՝ ըստ նպատակային օգտագործման, ինչպես նաև առաջարկություններ՝ նշված կոդերն այլ կոդերով (համարներով) փոխարինելու վերաբերյալ,

դ) «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի նոյեմբերի 3-ի N427/18-И11 և դեկտեմբերի 3-ի N00308/18-И10 գրություններով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «121», «122», «126», «127», «133», «134», «143», «144», «153», «154», «155», «156», «157», «158», «159», «160», «161», «162», «167», «168», «199» կոդերն օգտագործվում են ամրակցված ցանցի սկավառակային համարահավաքման և իմպուլսային եղանակներով շահագործվող ստեղնաշարային հեռախոսային սարքեր օգտագործող բաժանորդներին լրացուցիչ ծառայություններ մատուցելու նպատակով, և նշված կոդերն այլ համարներով փոխարինելը տեխնիկապես հնարավոր չէ, քանի որ այն կսահմանափակի նշված սարքավորումներից օգտվող բաժանորդների լրացուցիչ ծառայություններից օգտվելու հնարավորությունը,

ե) «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի նոյեմբերի 2-ի NMH/L180920/1.0/RY գրությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ընկերությունը դիտարկում է իր հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցում գործարկված և օգտագործվող «130» և «133» կոդերն այլ կոդերով փոխարինելու հնարավորությունը և խնդրում է նշված կոդերի փոխարինման ողջամիտ ժամկետ սահմանել 3 ամիսը,

զ) «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի նոյեմբերի 13-ի N1602 գրությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ընկերությունն առաջարկել է «121», «122», «126», «129» և «144» կոդերը նախատեսել հանրային շարժական կապի օպերատորների կողմից միջազգային ռոումինգ ծառայությունների մատուցման շրջանակում օգտագործման համար, հաշվի առնելով նաև միջազգային ռոումինգ ծառայությունների գործող ստանդարտները (GSM ստանդարտ), «133» կոդը վերջին 3 ամսվա ընթացքում բաժանորդների կողմից օգտագործվել է առնվազն 3 միլիոն անգամ, իսկ «120», «123», «127», «130», «131», «136», «140», «149» և «155» կոդերի փոխարինման գործընթացը ընկերությունը կարող է կազմակերպել 1 տարվա ընթացքում՝ փուլային տարբերակով և,

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ», 2-րդ կետի «ժդ» ենթակետերը, Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 13-ի «Հատուկ ծառայությունների կամ ծառայության կոդերի զբաղեցման կանոնները սահմանելու մասին» N210Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի՝ հատուկ

ծառայությունների կամ ծառայության կոդերի զբաղեցման կանոնների 7-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը Հանձնաժողովի տնօրինմանը հանձնել իր հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի ներքին հասանելիության շրջանակում օգտագործվող «130» կոդը:
2. «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը Հանձնաժողովի տնօրինմանը հանձնել իր հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի ներքին հասանելիության շրջանակում օգտագործվող «120», «123», «130», «131», «136», «140», «149» կոդերը:
3. Սահմանել որ, «ՎԵՌՆ Արմենիա», «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» փակ բաժնետիրական և «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահը օգտագործվող «121», «122», «126», «127», «129», «133», «134», «143», «144», «153», «154», «155», «156», «157», «158», «159», «160», «161», «162», «167», «168», «199» կոդերը շարունակվում են օգտագործվել մինչ այդ պահը գործող սկզբունքով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՎԵՌՆ Արմենիա», «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» փակ բաժնետիրական և «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՏԵՂԱԿԱԼ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան
16 հունվարի 2019 թ.